

կան դեռաւթիւնները բարձր դասակարգները:—Մար-
դեկ երբեմն մի քան տասն անելուց յետոյ եր-
կու քայլ յետ էն գնում:

ՆՈՐԻՆ ՎԵՀՎՓՐՈՒԹԻՒՆԸ ՏՓԹՍՈՒՄ

ԵՒ ՎԵՐԱԳՆԱԲԱՐՁՆ Ի Մ. ԱԹՈՒՄ:

Վեհափառ Հայրապետ առաջ շարժուց
խորհրդաւոր տօներին անձամբ մասնակցեց
հանդէսներին՝ վանքի Մայր եկեղեցում: Ծաղ-
կազարդի երեկոյեան կատարեց դանարացէքի
կարգը՝ մասնակցութեամբ Գեր. Գեորգ Արքե-
պիսկոպոսիտ Տ. Տիրայր և Տ. Կորիւն վար-
դապետներին: Հինգշարժի երեկոյ ռոնալուայի
խորհուրդը՝ իւր շուրջն ունենալով Գեր. Գե-
որգ Արքեպս. -ին՝ հինգ վարդապետների և
վեց քահանաների. եկեղեցին երկու գէպքում
ևս այնքան լիքն էր, որ հազիւ կարելի
չնչել Նորին Ս. Օծաթիւնը նախագահեց
նաև առաջ ու բրած երեկոյեան թաղման հան-
գիսին, որ կատարուեց զբաւմ վանքի բա-
կում: Սակայն այս բոլոր ժամանակ Նորին
Սրբութիւնը տկար էր զգում իրեն որի հետ
այս հոգնածութիւնը և թեթև ինչլուէն-
ցիան միանալով այնչափ ուժասպառ արին,
որ զատկի ճրագալոյցին և տօնին չը կար-
ողացաւ այլ ևս եկեղեցի իջնել և պատարագել
ինչպէս և շնորհաւորութեան եկած հիւրե-
րին ընդունել, որոց թուում էին Կովկասի
Կառավարչապետի օգնական Գին. Լէյտենանտ
Փրեզէ. Ս. Էկզարխը, Հոգարարձու պ. Սա-
նովսկին, Պարսից հիւպատոսը, բաղմաթիւ
բարձր կարգի պաշտօնեաներ, պատուաւոր
քաղաքացիք ևլն:

Հոգևոր Տիրոջ խնամող չորս բժիշկներ
պ. պ. Ա. Բարայեան, Բ. Սաւասարդեան, Տ.
Կարապետեան և Կառլէլին, տեսնելով որ
Նորին Սրբութեան հիւանդութիւնը ծանրա-
նում է, որոշեցին փոխադրել քաղաքից դուրս
Կրճամիսի այգիներում Շուրհ. Կոյս Հոխի-
սիակ Թայիրեանի ամբարանոցը, որ ուրախու-
թեամբ գրել էր Վեհափառ Հայրապետի տրա-
մադրութեան ներքոյ, Այստեղ մաքուր օդի

և առողջարար ջրի, բժշկաց անդուլ ջանքի
և խնամքի շնորհիւ ութ օրուայ ընթացքում
Հոգևոր Տէրն առողջացաւ և բաւական կաղ-
ուրուեց: Ապա ապրիլի 20 ին իջնելով ամա-
բանոցից՝ երկու օր մնաց Առաջնորդարանում
և 22-ին ուղևորուեցաւ գէպի Մայր Աթոռ:
Նորին Սրբութեան համար վարձուած էր ա-
ռանձին գնացք Սալօն—վազանով: Մինչև
կայարան ուղեկցում էին Տփիսիսի Գեր. Ա-
ռաջնորդը, պատուաւոր քաղաքացիք, քա-
հանաներ և բաղմաթիւ ժողովուրդ, իսկ այն-
տեղից մինչև Ալէքսանդրապոլ՝ Տ. Մխիթար
վարդապետ, Տ. Կորիւն վարդապետ, Տ. Գա-
րիգին վարդապետ Յովսէփեան, Առաջնորդ
Սրբազանի կողմից Թէլէթի և Շաւնարաթի
մանահայրները՝ Դիոնիսիոս և Յովհաննէս
վարդապետներ, Արժ. Գիւտ. Ա. քահանայ
ևլն. նոյնպէս և Բժշկապետ պ Աւետիք Բա-
րայեան:

Սանահին Կայարանում Վեհ. Հայրա-
պետին դիմաւորեց Ալէքսանդրապոլի փո-
խանորդ Տ. Մատթէոս վարդապետը, երկու
պատուաւոր քաղաքացեոց հետ, որոնք եկած
էին որպէս պատգամաւորներ, Ալէքսանդրապո-
լի հասարակութեան կողմից: Ղարաքիլիսայի
կայարանում ժողովուած էր զիւղի ամբողջ
ժողովուրդը մարդ, կին, ձեր և երեխայ, ծա-
նապարհին կանգնել էին տեղական ուսումնա-
րանի աշակերտները իրենց ուսուցիչներով, և
քահանաների հետ: Այնտեղ ներկայացաւ Նո-
րին Սրբութեան Ալէքսանդրապոլի գաւառա-
պետը, որ և ուղեկցեց մինչև քաղաք:

Ալէքսանդրապոլ հասաւ գնացքը երեկո-
յեան 1/4 ժամին և Հոգևոր Տէրը օրհնելով
զիմաւորող խուան բաղմութեան՝ կառքով
իջաւ առաջնորդարան: Եկեղեցեոյ դրան սպա-
սում էին տեղոյն հոգևորականները, բայց
Վեհափառ Հայրապետը տկար լինելով չը կա-
րողացաւ եկեղեցի իջնել: Երկրորդ առաւօտը
ապրիլի 23-ին կայսերական տօն լինելով՝ Նո-
րին Սրբութիւն պատարագին եկեղեցի իջաւ
և մնաց մինչև մաղթանքի վերջը: Տ. Կորիւն
վարդապետին հրամայած էր քարոզ խօսել
պատարագի ժամանակ: Նորին Սրբութիւն
երեք օր մնալով Ալէքսանդրապոլում ուղի ելաւ
այնտեղից գէպի Ս. Ընթիւմին ամսի 25 ին:

առաջին օրը զիշերեց Բաշ Ապարանս որտեղից օրհնութիւնն առնելով վերադարձան ուղեկցող բժիշկ պ. Նիկողայոս Տ. Սահակեան և փոխանորդ Տ. Մատթէոս վարդապետը և մնացին միայն Վեհ. Հոյրապետի սակաւաթիւ հետեորդները: Մողեոյ ս. Գեորգ վանքում ընդ առաջ էին եկել Սինօզի անդամներից Գեր. Տ. Մակար եպ. և Տ. Թուսիկ վարդապետը և միաբանութեան կողմից Տ. Համազասպ և Տ. Եղիշէ վարդապետները: Երեկոյեան ժամի 4-ին դուրս գալով Մողեոյ վանքից Նորին Սրբութիւնը հասաւ Ս. Էջմիածին ժամը 6½ րն. ձանապարհին հետըհետէ դիմաւորելու եկան կառքերով Հոգեոր Ճեմարանի Տեսուչ Տ. Կարապետ վարդապետը ուսուցիչներով: Վաղարշապատի հասարակութեան ասնուտերը և ուրիշ ձիււորներ: Վանքի մեծ դրան սպասում էին բոլոր միաբանութիւնը, Ճեմարանի աշակերտները և բազմութիւնը. Նորին Սրբութիւնն ուղղակի Մայր Տաճար առաջնորդուելով չոքեց իջման Ս. սեղանի առաջ և զխաբաց աղօթեց. ապա ուղեկցութեամբ միաբանից և աշակերտաց բորձրացաւ վեհարան և հանգստացաւ:

Նորին Սրբութիւնն այժմ զգալի կերպով կազդուրուում է և սկսել է զբազուել իւր բազմադիմի հոգսերով:

Կիրակէ ասրել 30-ին ս. պատարագից յետոյ Վեհափառ Հայրապետի ներկայութեամբ հոգեհանգիստ կատարուեցաւ նորոգ հանգուցեալ բարեյիշատակ Ենովք Բուդաղեանի համար: որ իւր նշանաւոր կարողութեան մեծադոյն մասը (աւելի քան կէս միլիոն ըուրլի) կաակել է խիստ հոգեշահ բարեգործական նպատակներով ի թիւս որոց 20 հազար ըուրլի Մայր Աթոռի Ճեմարանին: Մի տարուայ ընթացքում այս երկրորդ անգամն է: որ Ճեմարանը խոշոր նուէր է ըստանում Բուդաղեան բարեգործ ընտանիքից: Անցեալ տարի մայիսին վախճանեցաւ Բագումում հանգուցեալ Ենովքի եղբորորդին Սմբատ Բուդաղեան: որի եղբայրը պ. Երուանդ և այլ ժառանգները խստացել էին երկու մըշտական որդեգիրներ ունենալ Ճեմարանում նորա յիշատակին և կատարեցին այդ խոս-

տումբ. տարեկան 400 ը. թոշակն ուղարկելով՝ այժմ պահուում են արդէն երկու որդեգիրներ հանգուցեալ Սմբատի սնունով:

ՄԱՅՐ ԱԹՌՈՒ

Գեր. Անանիա եպիսկոպոս նշանակուած լինելով Գանձակի փոխանորդ՝ կիրակէ, ամսոյս 7-ին մեկնեց դէպի իւր պաշտօնատեղին: Գանձակի Փոխանորդ Տ. Բագարատ վարդապետ Թուաքալեան փոխադրուած է Տփլիս ս. Սարգսի վանահայրութեան: կալուածոց կառավարչի և կոնսիստորիայի նախանգամի պաշտօնով:

Գարնան բացուելուն հետ սկսուեցաւ նաև օտարազգի հիւրերի երթևեկութիւնը. պէտք է ենթադրել, որ երկաթուղու մօտենալու հետ կրողմանան նաև նոցա այցելութիւնները ս. Էջմիածնում: Այդ այցելուներից պէտք է յիշել առանձնապէս Ֆրանսիացի պ. Բոնէնին, որ Միջին Ասիայում հնագիտական հետազոտութիւններ կատարող Ֆրանսիական յանձնաժողովի պարագլուխն է և վերադառնալով այնտեղից Մայր Աթոռ այցելեց ամսոյս 7 րն իւր հայրենակից պարոն և արիկին Պորկիէնիերի հետ: Երգելի գիտնականը զխառ որ նպատակ է ունեցել գտնել այն բոլոր հետքերը, որ թողել են նեստորականները քրիստոնէական ստաքելութիւնը տարածելով մինչև Միջին Ասիայի և Չինաստանի խորքերը: Նորա հետազոտութիւններից երևում է, որ այդ քարոզիչների թուում եղել են նաև շատ հայեր, և նեստորականների ամենահռչակոր գաղթավայրերից մէկում՝ Մոնղոլիայի և Չինաստանի սահմանի վերայ, Սինխուգի և Տանց-Կարի մէջ՝ Տուպա—Չէնգ (Տուպա պարսպապատ քաղաք) կոչուած տեղում մինչև վերջին տարիներս եղել են հայ գաղթականներ, որոնց 1894 թ. ին տեսել է ամերիկացի մի ձանապարհորդ՝ այժմ հիւպատոս Եռնաստանում: Բայց 1895 թ ին տեղական մահմեդականները խոսովութիւն յարուցանելով այդտեղ՝ կործա-